ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 41

«25» 09 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի N 19 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 49 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը և նշված հրամանի նախաբանում նշված հանգամանքները, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումներին համահունչ ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթների պատշաճ իրականացումն ապահովելու, միջազգային փաստաթղթերում հիշատակվող՝ դատախազների ըստ հանցատեսակների մասնագիտացումը խորացնելու և ըստ այդմ դատախազական գործառույթների արդյունավետությունը բարձրացնելու, դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով և ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասի 8-րդ կետով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 7-րդ կետերով, 11-րդ հոդվածի 1-ին մասով, 18-րդ հոդվածի 3-րդ մասով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքը՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը՝ համաձայն հավելված N 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքները հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 11-ի N 35 և 2013 թվականի նոյեմբերի 4-ի N 75 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 19 հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ գլխավոր դատախազի
«25» 09 2019թ.

N 41 հրամանի

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը կազմված է՝

1. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից՝**

1) Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն,

2) Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

3) Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

4) Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

5) Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

6) Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

7) Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,

8) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,

9) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,

10) Պետական շահերի պաշտպանության վարչություն,

11) Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն,

12) Միջազգային-իրավական համագործակցության վարչություն:

2. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներից և դատախազներից:**

Հավելված N 2

ՀՀ գլխավոր դատախազի
«25» 09 2019թ.

N 41 հրամանի

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

1. **Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունը կազմված է՝**

1) Զինվորական կենտրոնական դատախազությունից,
2) Երևանի կայազորի զինվորական դատախազությունից,
3) Գորիսի կայազորի զինվորական դատախազությունից,
4) Լոռու կայազորի զինվորական դատախազությունից,
5) Սևանի կայազորի զինվորական դատախազությունից,
6) Շիրակի կայազորի զինվորական դատախազությունից,
7) Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազությունից,
8) Թիվ 1 կայազորի զինվորական դատախազությունից,
9) Թիվ 2 կայազորի զինվորական դատախազությունից,
10) Թիվ 3 կայազորի զինվորական դատախազությունից:

2. **Զինվորական կենտրոնական դատախազությունը կազմված է զինվորական դատախազի տեղակալներից, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, զինվորական կենտրոնական դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից, ներառյալ՝**

1) Կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժին,

2) Զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժին,

3) Պետական շահերի պաշտպանության բաժին:

Հավելված N 3

ՀՀ գլխավոր դատախազի
«25» 09 2019թ.

N41 հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1. Ֆինանսատնտեսական վարչություն.

1) հաշվապահական հաշվառման բաժին,

2) գնումների համակարգման բաժին,

3) նյութատեխնիկական ապահովման բաժին:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչություն.

3. Արարողակարգի վարչություն,

4. Անձնակազմի կառավարման վարչություն,

5. Ընդհանուր բաժին,

6. Արխիվի բաժին,

7. Ներքին աուդիտի բաժին,

8. Հանրային կապերի բաժին,

9. Վիճակագրության և վերլուծության բաժին,

10. Առաջին բաժին,

11. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժին,

12. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

13. Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

14. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

15. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

16. Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

17. Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

18. Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժին,

19. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժին,

20. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժին,

21. Պետական շահերի պաշտպանության վարչությանն աջակցող բաժին,

22. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող բաժին,

23. Միջազգային-իրավական համագործակցության վարչությանն աջակցող բաժին,

24. Զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչություն,

25. Երևան քաղաքի դատախազության տարածքային վարչություն,

26. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

27. Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

28. Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

29. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

30. Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

31. Շենգավիթ վարչական շրջանի դատախազության տարածքային բաժին,

32. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության տարածքային բաժին,

33. Կոտայքի մարզի դատախազության տարածքային բաժին,

34. Արարատի մարզի դատախազության տարածքային բաժին,

35. Արմավիրի մարզի դատախազության տարածքային բաժին,

36. Արագածոտնի մարզի դատախազության տարածքային բաժին,

37. Շիրակի մարզի դատախազության տարածքային բաժին,

38. Լոռու մարզի դատախազության տարածքային բաժին,

39. Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժին,

40. Գեղարքունիքի մարզի դատախազության տարածքային բաժին,

41. Վայոց ձորի մարզի դատախազության տարածքային բաժին,

42. Սյունիքի մարզի դատախազության տարածքային բաժին,

43. Երևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

44. Գորիսի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

45. Լոռու կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

46. Սևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

47. Շիրակի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

48. Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

49. Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

50. Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

51. Թիվ 3 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին: